ՔԱՐՈԶԽՈՍԱՔԳԱՂ

Տ. ՀՈՎՆԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(16 սեպտեմբերի, 2012)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ,
մինչեւ զՈրդին իւր միածին եւ»
(Յովհ. Գ. 6):

Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցին տոնում է փրկչական խաչին նվիրված չորս տոներից ամենամեծն ու ամենանվիրականը՝ Խաչվերացի տոնը:

Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինե թագուհին, տեսիլքով Աստծուց հրաման է ստանում գնալ Երուսաղեմ, փնտրել ու գտնել Քրիստոսի խաչափայտը եւ տեսարժան վայրերում տաճարներ կառուցել: Նա իր տեսիլքը պատմում է կայսրին, որը եռ հոժարությամբ ու մեծ հավատով բավականին ոսկի եւ միջոցներ է տրամադրում այդ գործի համար եւ իր մորը, օգնականների մեծ բազմությամբ, ճանապարհում է Երուսաղեմ:

Հեղինե թագուհին 327 թ. գալիս է Երուսաղեմ եւ մեծ ջանքեր գործադրելով՝ ցանկանում գտնել Քրիստոսի Ս. Խաչը:

Խաչափայտի տեղը հայտնի էր միայն Հուդա անունով մի հրեայի, որն իր նախնիների գրավոր ավանդություններից գիտեր խաչերի թաղման վայրը:

Հուդան սկզբում ընդդիմանում է, սակայն, վեց օր առանց հացի մնալով մի ցամաքած ջրհորի հատակում, սովից դրդրված՝ խոստովանում է:

Աստծո շնորհիվ թագուհին գտնում է երեք խաչափայտերը եւ անգամ Պիղատոսի ձեռքով գրված եռալեզու տախտակը, որը պոկված է լինում խաչից:

Դրանից թագուհին դարձյալ տրտմում է, որովհետև չի կարողանում զանազանել՝ այդ երեք խաչափայտերից ո՞րն է տերունականը: Սակայն Քրիստոսի Ս. Խաչը որոշվում է կատարված հրաշքի շնորհիվ. դրան հպվելով՝ կենդանանում է մեռած պատանին եւ հիվանդություններից բժկվում մահամերձ մի կին:

Այնուհետև Ս. Խաչի միջոցով, որով Տերը հաղթեց մահին եւ ավերեց դժոխքը, նոր հրաշքներ են կատարվում, որից շատ հրեաներ դարձի են գալիս ու մկրտվում: Հուդան, ում միջոցով գտնվել էր այս խաչափայտը, իր ցեղակիցների հետ մկրտվում է: Հետագայում նա Տիրոջ անվան համար նահատակվում է՝ արժանանալով մարտիրոսական պսակի:

Ս. Խաչի Գյուտից հետո Հեղինե թագուհու հրամանով 335 թ. Գողգոթայի վրա կառուցվում է «Ս. Հարություն» եկեղեցին, որտեղ եւ կանգնեցվում է Քրիստոսի խաչափայտը՝ հանդիսավորապես փառավորելու համար:

Սիրելի հավատավոր հայորդիներ, ահավասիկ Խաչվերացի տոնի հակիրճ պատմությունը: Բայց մեր նպատակն է պատմությունից վեր եւ այն կողմ մնացող խորհրդի, խաչի վրա թափված Քրիստոսի արյան միջոցով մեզ շնորհված հավիտենական կյանքի եւ հոգու փրկության մասին խոսել:

«Ասպուած սէր է» (Ա. Յովհ. Դ. 8): Այդ սերը բարու, բարեգործության եւ երջանկության ճառագայթումն է: Ասպված սեր է արեւի նման, որ ճառագայթում է եւ հենց այդ ճառագայթումից էլ արարվեց տիեզերքը, ստեղծվեցին մարդիկ, սերն արտահայտվեց ստեղծագործությամբ, որովհետև տիեզերքը, որտեղ ապրում ենք մենք, Աստծո ձեռագործն է, Աստծո սիրո թանձրացյալ, շոշոփելի արտահայտությունն է այս տիեզերքը, որ ինքնին բարի է, որովհետև երբ Աստված սեր ճառագայթեց, այդ սերն Իրենից դուրս տարածվեց, քանի որ սերը չի կարող ինքն իր մեջ բանտարկվել:

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին եւտ» (Յովհ. Գ. 6), որպեսզի մենք կյանքի ճշմարիտ ճանապարհն իմանանք եւ երջանկության իսկական աղբյուրն ունենանք:

Մարդը հեռացավ Աստծուց, բայց Աստված երբեք չհեռացավ մարդուց: Աստված եկավ դեպի մարդը, մարդ եղավ մեզ նման եւ մեզ փրկելու համար Իր կյանքն անգամ ընծայեց, որպես գինը մեր փրկության, եւ դա եղավ Իր խաչելությունը:

Սիրելի հավատակիցներ, բոլորս էլ գիտենք, որ Խաչը քրիստոնեական հավատքի խորհրդանիշն է, որը սակայն Քրիստոսից առաջ քառաթեւ մի գործիք էր, չարչարանքի համար նախատեսված մի գործիք մահապարտների համար, ովքեր սոսկալի չարչարանքներով դատապարտվում էին մահվան: Խաչի վրա էին գամում, որ տառապանքով մահանան, որպես պատիժ իրենց գործած հանցանքների: Սակայն Յիսուս ի՞նչ հանցանք ուներ եւ ինչո՞ւ խաչվեց:

Եղե՞լ է արդյոք աշխարհիս մեջ ավելի սոսկալի, բայց եւ ավելի թանկագին մահ,

քան այս մահը... եւ ո՞ւր է գաղտնիքը: Պողոս առաքյալը բնորոշում է այս մահվան առանձնահատուկ բնույթը՝ ասելով. «Քրիստոս վասն մեր մեռաւ» (Հռով. Ե : 9): Ահա թէ ո՞ւր է գաղտնիքը, ահա թե ինչո՞ւ է Խաչը մեզ համար մեծ սրբություն, իսկ Խաչեցյալը՝ պաշտելի:

Հիսուս, երբ խաչվեց այդ նույն խաչափայտի վրա, խաչափայտը դադարեց չարչարանքի գործիք լինելուց, հեղաշրջվեց նրա իմաստը, այն կերպարանափոխվեց: Խաչը դարձավ փրկության գործիք եւ ոչ թե չարչարանքի: Քանզի Խաչը սիրո արտահայտությունն է. քարոզել սեր, բայց չգիտենալ զոհվել՝ այդ սերը վավերական եւ ճշմարիտ չէ: Սերը բառ չէ, սերը զգացում չէ միայն: Սերը կյանք է եւ մանավանդ գործ: Ինչպես կարող է լույսը լույս լինել՝ առանց լույս տալու: Ինչպես կարելի է սիրել, առանց զոհելու, առանց զոհաբերվելու: Սեր ունեցողը պետք է իմանա նաեւ հրաժարվել եւ զոհաբերվել: Քրիստոնեական սիրո մեծագույն ուժը Քրիստոսի անձի խաչելությունն է: Ուստի խաչելությունը ոչ թե մահվան ճանապարհն է, այլ՝ հաղթանակի եւ հարության:

Սիրելիներ, պատմության ընթացքում եղան բազում մարդիկ, երբեմն մտքի հզոր կարողության տեր մարդիկ, ովքեր զուտ իմացական հայեցողությամբ, տրամաբանական խորհողությամբ՝ անհեթեթ, անհավատալի եւ անընդունելի գտան եւ հռչակեցին Քրիստոսի խաչելությունը եւ մանավանդ հրաշափառ հարությունը: Նրանցից ոմանք հայտարարեցին, որ խաչելության ու հարության այդ հավատքի հիման վրա բարձրացած քրիստոնեական Եկեղեցիները պիտի վերածվեին Քրիստոսի մնայուն վերջնափակ դամբարանների: Սակայն Մահվան ամենազորության այսպես կոչված «մարգարեներն ու առաքյալներն», իրենք գերեզման մտան, բայց Քրիստոսի խաչելությունը եւ առավել եւս հարությունը չկարողացան գերեզմանել, ինչպես հրեաներն ու հռոմեացիները չէին կարողացել գերեզմանափակել Քրիստոսին:

Դժվար է Խաչի ճանապարհը, փշոտ ու նեղ, բայց այն մեզ դեպի փրկություն է տանում, ինչպես պատմության մեջ, երբ մեր ազգը քայլեց այդ նեղ ճանապարհով հաղթանակի ու ձեռքբերումների նշանակալի դրվագներ արձանագրեց իր կյանքի շրջագծից ներս:

Մեզ համար կենսականորեն ամենածանր եւ դաժանակիր ժամանակաշրջանում անգամ, հայ ազգը կարողացավ տոկալ եւ հարատեւել, նույնիսկ ավելին՝ ապրել եւ ստեղծագործել, նաեւ կարողացավ չդրդնջալ, այլ միշտ փառք տալ աշխարհաստեղծ Աստծուն եւ կրելով կյանքում իրեն բաժին հասած Խաչը՝ ասել. «Տեր Աստված Դու մեզ քար եւ հող տվեցիր, իսկ մենք այդ քարից ու հողից Տաճար ու վանք կերտեցինք եւ Խաչ ու խաչքար տվեցինք, Դու մեզ փայտ ու կաշի տվեցիր, իսկ մենք Քեզ մագաղաթ ու թուղթ տվեցինք»:

Եւ մի՞թե Քրիստոսի Խաչի հանդեպ ունեցած հավատքով չէր, որ մեր նախնիները կարողացան անմար պահել մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի, Արագածի

կապարին զետեղված կանթեղի խորահորհուրդ լույսը, եւ մի՞թե Քրիստոսի Խաչի հանդեպ ունեցած հավատքով չէր, որ Օշականի Սուրբը, այբբենաստեղծ ու գրագյուտ Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը փրկեց մեր ազգին ձուլվելու ահասարսուռ վտանգից, եւ մի՞թե Քրիստոսի Խաչի հանդեպ ունեցած հավատքով չէր, որ Կարմիր Վարդանը եւ նրա զինակիցները կարողացան խորտակել հազկերտյան սպառնալիքը:

Սիրելի հավատակիցներ, այս ամենը մենք ունենք այսօր, որպես նախնյաց ժառանգություն, քանի որ մեր նախնիները հավատացին եւ կրեցին կյանքում իրենց բաժին հասած Խաչը: Այսօր մենք՝ ապրողներս ենք կրելու այդ Խաչը, քանի որ Խաչյալի հանդեպ ունեցած մեր հավատքն ու սերը միմիայն զոհողության այդ ձեւով կարող ենք արտահայտել: Ուստի միշտ հիշենք եւ երբեք չմոռանանք, «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին եւտ» (Յովհ. Գ. 6):

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն, եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն: